«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Նաջարյան Աննա

Ուսումնական հաստատություն՝ Ն.Վ. Գոգոլի անվան համար 35 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….. 3

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամկաարգի ձեվավորման գործում ……. 6

Էպոսի դասավանդման հետազոտական ընթացքը ……... 10

Եզրակացություններ և առաջարկություններ ……. 16

Օգտագործված գրականության ցանկ …….. 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Ներկայումս համատարած նկատում ենք հոգևոր և բարոյական արժեքների անկում, հայրենասիրական զգացմունքների բացակայություն, պետության ներկա իրավիճակի բնորոշ և անհանգստացնող գծեր և հատկապես երիտասարդների շրջանում: Ներկայումս էպոսը և սեփական արմատների և ուժի ճանաչումը մեծ դեր է խաղում երեխաների հոգեբանական դաստիարակության, ազգային արժեհամակարգի, հայրենասիրության բարոյահոգեբանական ձևավորման վրա: Այդ է պատճառը, որ Հայ գրականության դասերի ընթացքում առավել մանրակրկիտ է ուսումնասիրվում «էպոս» դասընթացը և լրացուցիչ ժամանքանակ է տրամադրվում նյութն առավել ըմբռնելի դարձնելու համար[1]:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել հայկական էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում, թե ինչպիսի առանձնահատկություններով է օժտված:

Հետազոտության օբյեկտը երեխաների արժեհամակարգի ձևավորումն է էպոսի միջոցով:

Հետազոտության առարկան հայկական էպոսի համատեքստում երեխաների դաստիարակության միջոցներն են:

Հետազոտության վարկածն այն է, որ աճող սերնդի՝ հայ մանկավարժական գաղափարներին, փորձին ու ավանդույթներին համահունչ դաստիարակությունն առավել լիարժեք և արդյունավետ կիրականանա, եթե՝

1. մանկավարժության համատեքստում ուսումնասիրվեն և համակարգված ներկայացվեն աճող սերնդի ընտանեկան դաստիարակության ու

[1] Գրական ստեղծագործություն. վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան, 1983թ., էջ 158

միջսերնդային փոխհարաբերությունների վերաբերյալ պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում հայ և արտերկրի մշակույթի գործիչների հայացքները ինչպես ներկայացված է էպոսում,

2. Ուսումնասիրվեն և վեր հանվեն հայկական էպոսում առկա մշակութային և ընտանեկան դաստիարակության փորձը, գաղափարները, միջոցները, վերլուծվի և հիմնավորվի ներկայումս ընտանեկան դաստիարակության գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությունը:
3. Բնութագրվեն և մեկնաբանվեն ազգային արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները ժամանակակից աշխարհում որոնք մեծ դեր են խաղում դաստիարակության համար, հիմնավորվեն էթնոմանկավարժության մեջ ընտանեկան դաստիարակության կենսունակ փորձի կիրառման հնարավորություններն աճող սերնդի ընտանեկան արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն** են՝

- Դիտարկել էպոսի դերը և առանձնահատկությունները երեխաների դաստիառակության գործում,
- Բացահայտել դրական կողմերը,
- Կերպարների օգնությամբ ի ցույց դնել ազգային ըժեհամակարգի ձևավորման գործոնները

Հետազոտական աշխատանքի գործնական և տեսական նշանակությունը:

Ուսուցչի կողմից կազմակերպված խաղերը նպաստում են սովորողի հետազոտական, ստեղծագործական, նախաձեռնողական, ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը և հնարավորություն են տալիս նրանց ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել դասի ընթացում ձեռք բերած տեսական գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար

ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածական մասից, հիմնական մասից, եզրակացություններից և առաջարկություններից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սասնա դյուցազունների չորս սերունդներն էլ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ, նվաճողների և բռնակալների նկատմամբ հետևողական վճռականությամբ մղած պայքարով: Հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ սեփական գոյության իրավունքը հաստատելու համար մղած պայքարն են ներկայացնում նրանք՝ պահպանելով մեր ազգային արժեքները, որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը նույնն է մնում[2]:

Հատկապես Սասունցի Դավթի կերպարի միջոցով սիրելի հերոսի սխրագործությունները պատկերելիս ժողովուրդը ազատություն է տալիս իր երևակայությանը, հիպերբոլիկ պատկերներով պանծացնում նրան: Իսկ բռնակալ Մելիքին և նրա կամակատարներին սպանիչ ծաղրով է ներկայացնում:

Ասվում է, որ մեր էպոսում ամրագրված արժեքները դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը (վկան՝ ապրիլյան քառօրյա պատերազմը): Հետևություն են անում, որ այսօր ինչ կատարվում է, էպոսի մեջ դրա հիմքը կա: Բերում են օրինակներ:

Համեմատում են դրական և բացասական կերպարներին՝

- ուժի տեսակետից (Դավիթ և Մելիք),
- երդմանը հավատարիմ լինելու տեսակետից (Արմաղան, ապա՝ Խալիֆ և Մելիք):

Իրենք են առաջարկում համեմատության այլ հիմքեր և տալիս պատասխաններ: Խոսում ենք մեր հերոսների նկատմամբ վերաբերմունքի մասին (էպոսում, այսօր):

[2] Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976 թ., էջ 71

Նկատում ենք, որ կա միտում՝ մեր մեջ եղած ուժեղին թուլացնելու: Էպոսից Խանդութի երկրպագուների կողմից Դավիթին խմեցնելով թուլացնելու օրինակն են բերում, այլ օրինակներ՝ մեր պատմությունից և այսօրվա իրականությունից:

Էպոսի գաղափարական գծերից է ազատասիրությունը: Այնտեղ ազատությունը ներկայացվում է որպես բնական իրավունք ամեն մի մարդու համար:

Հերոսները, պաշտպանելով իրենց ազատությունը, ուրիշներին չեն զրկում այդ իրավունքից: Սասունում բոլորը հավասար են և ազատ: Իրենց համար հատուկ կարգավիճակ մարդկային որևէ խմբում (ընտանիք, ազգակիցներ, համերկրացիներ և այլն) չեն էլ գիտակցում, ուր մնաց՝ պահանջեին: Նրանք ազատ էին ու վեր մարդկանց ստեղծած արհեստական օրենքներից:

Աշակերտներին առաջարկում եմ կարծիքներ փոխանակել ազատության մասին այսօրվա պատկերացումների շուրջ:

Էպոսի գաղափարական գծերից է ազնվությունը: Ազնվությունը նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն է մեր հերոսների համար: Նրանք ազնիվ ու անկեղծ են և՛ իրենք իրենց, և՛ այլ մարդկանց հետ հարաբերություններում: Ազնվությունից է ծնունդ առնում նրանց մարդասիրությունը: Էպոսում բազմաթիվ են օրինակները, որոնք գտնում են և ներկայացնում աշակերտները:

Ազնիվ աշխատանքով են ապրում մեր էպոսի հերոսները: Սասունում չկար մարդու շահագործում մարդու կողմից: Երբ աշխատավոր մարդիկ լսում են, որ Սասունում հարկ ու տուրք չեն վերցնում, բոլոր կողմերից գնում են այնտեղ: Սասնա դյուցազունները վերացնում են հարկերը, ոչնչացնում կողոպտիչներին, իսկ կողոպուտը վերադարձնում ժողովրդին: Նրանցից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում նույնիսկ պարտված թշնամու ունեցվածքին ձեռք տալ: Դավիթը Մելիքին սպանելուց հետո նրա զորքին ազատ է արձակում, ինքը վերադառնում է Սասուն՝ մի սայլի վրա դրած տանելով միայն Մելիքի ականջը՝ որպես նրա ոչնչացման ապացույց, ոչ թե ռազմավար:

Մեր դյուցազունները բնութագրվում են և փոխադարձ հարգանքով ու հանդուրժողականությամբ, սիրելիների նկատմամբ ջերմ հոգածությամբ ու անմնացորդ սիրով:

Խաղաղասիրությունը, խաղաղ կյանքով ապրելու գաղափարն է մեր դյուցազուններին մղում պայքարելու ոչ միայն հայ ժողովրդի, այլև ընդհանրապես մյուս ժողովուրդների համար: Էպոսում զարգանում է այն գաղափարական գիծը, որ ժողովուրդներն իրար նկատմամբ թշնամանք չունեն, թշնամություն հրահրողները իշխողներն են[3]:

Էպոսում համամարդկային գաղափարներ են ներկայացվում. խաղաղության պայքարը պատերազմի դեմ, կառուցման պայքարը՝ ավերման դեմ, արդարության պայքարը՝ անարդարության դեմ:

Հարուստ ու բազմազան են էպոսի գաղափարական բովանդակության այս կամ այն գիծը ներկայացնող օրինակները: Դրանք դուրս են գրում և ներկայացնում աշակերտական խմբերը, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է գաղափարական բովանդակության մի գծի վերաբերյալ էպոսից բերել օրինակներ:

Գաղափարական բովանդակությունն ուսուցանելիս շեշտում եմ, որ մեր հայրենիքը մեր քրիստոնյա էությունն է, աստվածատուր մեր ինքնության կերպը, մեր տեսակը, որ պիտի կրենք: Հայրենիքի ոչ միայն տարածքային-նյութական ընկալում պիտի ունենանք, այլև հոգևոր: Հայրենիքը մարդկանց տվյալ հանրության հոգևոր աշխարհի կերպն է:

Գաղափարները, որոնք ներկայացվում են էպոսում, այն դարձնում են մեր ժողովրդի ինքնության վկայագրերից մեկը և մեր ժողովրդի՝ էությամբ քրիստոնյա լինելու ապացույցն են:

[3] Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1980 թ., էջ 97

Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն (անաղարտություն), արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող:

Մեր էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են այսօր և հետագայում էլ կուղղորդեն մեր ժողովրդին դեպի կատարելություն: Աշակերտները, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսի՞ն դառնալ, դեպի ո՞ւր շարժվել: Չէ՞ որ մեր այսօրվա իրականությունը, մեր հեռուստահաղորդումները, մթնոլորտը այն բարեբեր հողը չեն, որտեղ պիտի ծլի ու աճի հայի տեսակը: Մատաղ սերունդը օդի պես կարիք ունի՝ սնվելու մեր ժողովրդական բանահյուսությամբ, մեր դասական գրականությամբ ու արվեստով:

ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքի համար ընտրվել է 10-րդ դասարանը, որտեղ սովորողների թիվը 20 է:

Դասարան ՝ 10-րդ

Դասի թեմա ՝ «Էպոս»

Դասի նպատակը՝ Խաղի միջոցով դասի սերտում և կարծիքների քննարկում:

Արժեքային համակարգ՝ ձևավորել ընկալելու և գնահատելու կարողություն:

Խնդիրները՝

- Աշակերտների մոտ ձևավորել թիմային աշխատանքի կարևորությունը,
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Վերջնարդյունքը՝ Խաղի ավարտին ներկայացնել արդյունքները:

10-րդ դասարանում էպոսի ավելի խորացված ու համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի շատ ուշադրություն դարձնելու նրա գաղափարական բովանդակությանը, բացահայտելու ժողովրդական այս հոյակերտ կոթողի նյութը, վեր հանելու նրա ասելիքի հիմնահարցերը, դաստիարակելու աշակերտներին դյուցազնավեպի ոգով[4]:

Չնայած էպոսի գաղափարական բովանդակության ուսուցմանը առանձին ժամ ենք հատկացնում, սակայն այն անցնելիս առաջին ժամից իսկ աշակերտների հետ հանգամանորեն, շերտ առ շերտ բացահայտում ենք գաղափարական բովանդակությունը՝ կապված տվյալ ժամին անցնելիք թեմայի հետ (սյուժե, կերպարների վերլուծություն և այլն): Իսկ գաղափարական բովանդակությանը

[4] Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության բացահայտումը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան, 1982 թ., թիվ 1), էջ 57

հատկացված ժամը հնարավորություն է տալիս նախորդ ժամերին ասվածը համակարգելու, նոր բացահայտումներ կատարելու և ընդհանրացման համար[5]:

Նախքան էպոսի գաղափարական բովանդակությունը հանգամանորեն բացահայտելը պատկերացում ենք տալիս այս ժանրի մասին, ընդհանուր գծերով ծանոթացնում այլ ազգերի էպոսներին:

Հետաքրքիր է, որ նյութի ուսումնասիրության ընթացքում երեխաները հարց են հղել՝ թե ինչու այսօր էպոս չի հորինվում, պատասխանում ենք, որ էպոս հորինվում է մարդկության մանկության շրջանում:

Ապա շարունակում ենք քննարկումները մեր էպոսի ստեղծման ժամանակաշրջանի, նրա մեջ գաղտնագրված գաղափարների, բարոյական սկզբունքների, մեր ժողովրդի կողմից մարդու և մարդկայինի մասին պատկերացումների, ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտնջենական արժեքների մասին ենք խոսում, շեշտում, որ այդ արժեքները յուրաքանչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են յուրովի:

Դասարանը կահավորում ենք էպոսի թեմաներով ստեղծված նյութերով՝ Հ.Կոջոյանի նկարների,

[5] «Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան, 1981 թ., էջ 94

Հր.Քոչարի «Սասունցի Դավիթ» արձանի վերատպությունները, գրքեր (էպոսի տարբեր հրատարակություններ,



գրական մշակումներ՝ Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը, Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը, Չարենցի «Սասունցի Դավիթ»-ը, Հ.Օշականի «Սասունցի Դավիթ թատերգությունը»): Պատերին փակցված պաստառներին մեծերի խոսքերն են էպոսի մասին: Օրինակ՝ «Ոչ մի բանի մեջ ժողովուրդներն այնքան պարզ ու պայծառ չեն երևում, որքան էպոսում» (Հ. Թումանյան):

Մինչ էպոսի ուսումնասիրության ավարտը դասասենյակի՝ էպոսին հատկացված անկյունում ավելանում են աշակերտների՝ էպոսի թեմաներով արած նկարները, ստեղծած տիկնիկ-կերպարները:

Թղթապանակների մեջ աշակերտները հավաքում են իրենց գրած ռեֆերատները, շարադրությունները, մտքերը, բանաստեղծություններն էպոսի թեմաներով: Աշակերտների մի խումբ էլ աշխատում է էպոսից իրենց ընտրած հատվածի բեմականացումը պատրաստելու համար: Կատարվում են այլ աշխատանքներ ևս:

Կարևորում եմ «Սասնա ծռեր» դյուցազներգության նյութի, ստեղծման ժամանակաշրջանի, ուսումնասիրողների կարծիքների մասին գիտելիքներ տալն աշակերտներին:

Քանի որ աշակերտները նախօրոք՝ ամռան ընթացքում, կարդացել են էպոսը, իրենց տետրերում նշումներ են կատարել, անդրադարձել կերպարներին, համառոտ ներկայացրել նրանց, նախորդ դասարաններում էլ հատվածներ են անցել էպոսից, հանձնարարվում է ստեղծել էպոսի տետր, որտեղ կատարում են տարբեր աշխատանքներ: Օրինակ՝ որպեսզի ստուգեմ՝ արդյոք կարդացել են էպոսը, դիմում եմ տարբեր մեթոդների: Հանձնարարում եմ էջը ուղղահայաց բաժանել երկու մասի: Տալիս եմ առաջադրանք՝ համեմատել հին և նոր էպոսները, ապա գրել ընդհանրությունները (Վենի դիագրամ մեթոդ):



Հին էպոս ենք պայմանականորեն համարում ժողովրդական բանահյուսությունից մեր անցած նախորդ նյութերը՝ Գողթան երգերը, առասպելները՝ ամբողջացրած «Վիպասանք» վերնագրի տակ: Հանձնարարում եմ համեմատել հին և նոր էպոսներում ժողովրդական մտածողության դրսևորումները և այլն: Աշակերտները հիմնականում կարողանում են արտահայտել իրենց մտքերը:

Քանի որ էպոսի ուսուցումը նախատեսված է 10-րդ դասարանում, և քանի որ պատանիներն ավելի շատ են հակված ինքնուրույնության, ուստի աշխատում եմ պատրաստի մեկնաբանություններ և գաղափարներ չտալ, այլ իրենց՝ աշակերտների միջոցով բացահայտել էպոսի գաղափարական բովանդակությունը:

Գիտենք, որ մեր ազգի՝ իբրև տեսակի գոյության հիմքը հայրենասիրությունն է, որը լավագույնս դրսևորվում է էպոսում: Հայրենասիրությունն էպոսի կերպարների համար առիթից առիթ ի հայտ եկող երևույթ չէ: Դա նրանց առօրյա կեցության ձևն է և դրսևորվում է նրանց բոլոր արարքներում՝ օտար զավթիչների դեմ մղած կռվում, երկրի շենացմամբ զբաղվելիս, հասարակական անարդարությունների դեմ պայքարում, հանուն ընտանեկան ավանդույթների պահպանման գործունեության ժամանակ, նույնիսկ բարկության և կամ քնարական տրամադրության պահերին: Բոլոր դեպքերում նրանք չեն կորցնում իրենց մարդկային կերպարը. արդարամիտ են, վեհանձն, մանկական մաքուր պարզությամբ, բռնության դեմ՝ անողոք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային էպոսը նկարագրում է տվյալ ազգի կամ էթնոսի ծագումը, զարգացումը և պատմությունը: Այն նաև օգնում է փոխանցել ազգի ինքնորոշման կամ ինքնաճանաչման դրվագները և բազմաթիվ ազգային խորհրդանիշների առաջացման պատմությունը, ինչպես նաև հնարավորություն է տալիս երեխաների դաստիարակվել ազգային ոգով:

Սույն հետազոտական աշխատանքից հան գել ենք մի շարք եզրակացությունների՝

- Հայկական մշակույթում «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Սասունում:
- Բոլոր ազգային էպոսներն իրենց առջև դնում են պետականության խնդիրը, և եթե այն չունի պետականության խնդիր, ապա այն էպոս համարվել չի կարող: Հայկական ազգային էպոսում պետության և պետականության խորհրդանիշը համարվում է բերդը: Բերդի և հզոր պարիսպների կառուցումով էլ հենց էպոսի առաջին գլխավոր հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը սկիզբ են դնում Սասնա տոհմին և Սասնա տանը:
- Էպոսում նկարագրվող պատմական իրադարձությունները տեղի են ունենում արաբական տիրապետության ժամանակ, և նկարագրվում է սասունցիների պայքարն արաբ նվաճողների դեմ: Որոշ պատմական իրադարձություններ ու հերոսների անուններ համընկնում են: Սակայն պետք է նշել, որ հայկական էպոսի արմատները հասնում են հազարամյակների խորքը, երբ մարդն ուներ ամենապարզունակ ապրելակերպը: Այն իր մեջ խտացնում է պատմության տարբեր ժամանակահատվածներ ու մշակութային շերտեր:

Հայկական էպոսում հիշատակվում են թագավորը, իշխանը, հոգևորականը և ռամիկ ժողովուրդը: Սակայն նրանք բոլորն իրենց նիստ ու կացով, բարքերով և կրթությամբ գրեթե չէին տարբերվում: Թագավորը և ժողովուրդը մտերմիկ հարաբերությունների մեջ էին միմյանց հետ: Սասունցիները սիրում էին իրենց տերերին: Նրանց միջև միակ էական տարբերությունն այն էր, որ մեկը հրամայողն էր, իսկ մյուսը՝ լսողը:

«Սասնա ծռեր» էպոսը մեզ հաղորդում է հսկայական տեղեկություններ հայ ժողովրդի ապրելակերպի, ընտանիքի, ներընտանեկան և հասարակության մեջ փոխհարաբերությունների, կրոնական ընկալումների, ծիսական արարողակարգերի և հավատալիքների մասին:

Նյութից կարող են անել հետևյալ առաջարկությունները՝

- Էպոսի դասավանդումն իրականացնել պլանային ծրագրով և կրկնողությունների ժամանակ կրկին անդրադառնալ Էպոս թեմային,
- Համեմատել մյուս ազգերի էպոսների հետ, տանել համեմատականներ,
- Ներկայացնել թե որ այլ ազգի էպոսի հետ են ասոցացվում «Սասնա ծռեր» էպոսի հերոսները, կրկին տանել համեմատականներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրական ստեղծագործություն. վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան, 1983թ.:
2. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980 թ.
3. Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության բացահայտումը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան, 1982 թ., թիվ 1):
4. Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976 թ.:
5. Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1980 թ.:
6. «Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան, 1981 թ.: